600.0290.21.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2016 թվականի №290Ա

քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի ապրիլի 13-ի №70Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև 2016 թվականի օգոստոսի 1-ը պետք է ավարտեր էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամային շեղումների շտկման գործընթացը,

բ) սույն որոշման «ա» կետում նշված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Հանձնաժողովն իր 2016 թվականի օգոստոսի 2-ի №ԱՎ-1561Զ գրությամբ դիմել է Ընկերությանը, ինչին ի պատասխան Ընկերությունը 2016 թվականի օգոստոսի 9-ի №04-ԿՀ-04/3212 գրությամբ հայտնել է, որ չնայած կատարված աշխատանքներին, դեռևս առկա են էլեկտրոնային առևտրային հաշվիչներ, որոնց ժամային շեղումները տեխնիկական պատճառներով չեն շտկվում,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2016 թվականի սեպտեմբերի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի №70Ա որոշման պահանջը խախտելու փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) Ընկերությունը 2016 թվականի սեպտեմբերի 14-ի №04-ԿՀ-04/3729 գրությամբ հայտնել է, որ ձեռնարկել է լրացուցիչ միջոցառումներ էլեկտրոնային առևտրային հաշվիչների խախտված կամ չուղղված ժամերը շտկելու ուղղությամբ,

ե) Հանձնաժողովի աշխատակազմը հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացուցիչների հետ համատեղ 2016 թվականի սեպտեմբերի 20-ին Երևան քաղաքի մի շարք վարչական շրջանների բազմաբնակարան շենքերում իրականացրել է

էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամերի աշխատանքի ճշտության ստուգում, որի ընթացքում համատեղ արձանագրվել են մի շարք էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամային շեղումներ,

զ) Ընկերությունից լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով Հանձնաժողովը երկու անգամ տասական օրով երկարաձգել է վարչական վարույթի ժամկետը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը,

է) Ընկերությունը 2016 թվականի հոկտեմբերի 14-ի №04-ԿՀ-04/4119 գրությամբ հայտնել է, որ ժամային շեղումներով առևտրային էլեկտրոնային հաշվիչների հայտնաբերման ուղղությամբ վերջինիս կողմից իրականացվել են մեծածավալ աշխատանքներ, ինչի արդյունքում ի հայտ են եկել թվով 29876 հաշվիչներ, որոնց շեղումները պայմանավորված են մարտկոցների լիցքաթափված լինելու կամ այլ թերություններով: Գրությամբ Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ խնդիրներն ամբողջական պարզելու նպատակով իրականացվում են մի շարք փորձաքննություններ, որոնց արդյունքում կկազմվի միջոցառումների իրականացման ծրագիր: Նշված ծրագրի, ինչպես նաև աշխատանքների ավարտման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի Հանձնաժողով,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի №70Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, ինչը հանգեցրել է մի շարք սպառողների շահերի խախտման,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 3-րդ մասի «գ» կետը և 6-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի №70Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը խախտելու համար Ընկերության նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել տուգանք՝ 5 000 000 (հինգ միլիոն) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում ամրագրված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում մշակել և Հանձնաժողով ներկայացնել էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամային շեղումների շտկման ծրագիր-ժամանակացույց՝ ներառելով տարբեր տեխնիկական խնդիր ունեցող հաշվիչների ժամային շեղումների շտկման համար նախատեսվող միջոցառումների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր միջոցառման ավարտման ժամկետը.

3) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 հոկտեմբերի 2016թ.